ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության <<Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկը, որը գտնվում է ՀՀ, ք.Երևան, Նալբանդյան 28 հասցեում, ստորև ներկայացնում է ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2014/2ՃՀ ծածկագրով բաց ընթացակարգի արդյունքում 10.06.2014թ-ին կնքված ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2014/2ՃՀ պայմանագրում 2015թ. ապրիլի 18-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառը	Փոփոխությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքով. **ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2014/2ՃՀ** պայմանագիրը կնքվել է ընդհանուր՝ 374 980 984 ՀՀ դրամ գումարով, սակայն պայմանագրի կնքման տարում նախատեսվել են ֆինանսական միջոցներ 2014 թվականին իրականացվելիք աշխատանքների համար: Պայմանագրով նախատեսվել է դրույթ, որ մնացած գումարը կհատկացվի հետագայում: ՀՀ 2015թ պետական բյուջեով 2015 թվականին իրականացվելիք աշխատանքների համար հատկացվել են համապատասխան ֆինանսական միջոցներ:
Փոփոխության նկարագրություն:	Սահմանվել է 2015 թվականին իրականացվելիք աշխատանքների ծավալը: Հաստատվել են 2015 թվականին իրականացվելիք աշխատանքների ծավալաթերթ-նախահաշիվն ու օրացուցային գրաֆիկը համաձայն թիվ 1 և թիվ 2 հավելվածների: Հաստատվել է 2015թ իրականացվելիք աշխատանքների վճարման ժամանակացույցը համաձայն թիվ 3 հավելվածի:
Փոփոխության հիմնավորում:	Պայմանագրի 8.4 և 8.6 կետ և «ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Հասմիկ Օրդուխանյանին:

Հեռախոս՝ 010 /580-523/

Էլ. փոստ՝ hordukhanyan@transportpiu.am

Պատվիրատու՝ «Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ